Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-840[6]-03.05.2024-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտպանության մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «ոստիկանության զորքեր,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից:

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-840[6]-03.05.2024-ՊԱ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պաշտպանության մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-196-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «ոստիկանության զորքեր,» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~«Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը~~ 2025 թվականի նոյեմբերի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՎԱՐԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-840-03.05.2024-ՊԱ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մաս	Առաջարկվում է. 1) Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով. «6) պատերազմի ժամանակ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելը.»: 2) Նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 12.1-ին հոդվածով. «Հոդված 10. Ոստիկանության գվարդիայի լիազորությունները Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելիս 1.Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցելիս	**Չի ընդունվել:** «Պաշտպանության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և անվտանգությունը, այդ թվում՝ քաղաքացիների	**Չի ընդունվել**

			ոստիկանության գվարդիան լիազորված է. մասնակցել զինված ուժերի՝ իրենց մասով կիրառման պլանների մշակմանը և ապահովելու դրանց կիրառումը.»:	պաշտպանվածությունը, ռազմական սպառնալիքներից ապահովելու նպատակով խաղաղ ժամանակ և ռազմական դրության պայմաններում քաղաքական, ռազմական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցների կիրառման ու միջոցառումների իրականացման ընդհանրությունն է: Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ պետական կառավարման համակարգի մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում իրականացնում են պաշտպանության ոլորտում սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորություններ: «Ոստիկանության մասին»	

				օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը համապատասխան նախարարության ենթակայությամբ գործող, միասնական համակարգ կազմող պետական կառավարման համակարգի մարմին է: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության գվարդիան ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանում է, որը կոչված է պաշտպանել անձի իրավունքները և ազատությունները, ինչպես նաև ապահովել հասարակության և պետության անվտանգությունը: Նույն նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ոստիկանության գվարդիայի խնդիրն է՝	

				ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելը, իսկ 10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ռազմական դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովմանը, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանը մասնակցելիս ոստիկանության գվարդիան լիազորված է անհրաժեշտության դեպքում մասնակցել ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական	

				գործողություններին: Այսինքն՝ առաջարկվող և գործող օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ ոստիկանության գվարդիան հանդիսանում է համապարփակ անվտանգության բաղադրիչ և անհրաժեշտության դեպքում, իր իրավասության սահմաններում, իրականացնելու է նախագծով նախատեսվող իր լիազորությունները:	
2.	**ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյան**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս, 3-րդ գլխի վերնագիր, 14-րդ հոդվածի վերնագիր, 1-ին մաս, 2-րդ մաս, 3-րդ մասի 2-րդ նախադասություն, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ մասեր, 25-րդ հոդվածի 3-րդ մաս, 26-րդ հոդվածի 1-ին	**«**Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի **3-րդ գլխի վերնագրում** «ՀԱՐԿԱԴՐԱՆՔ» բառը փոխարինել «ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		և 2-րդ մասեր և 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետեր	ՄԻՋՈՑՆԵՐ» բառերով, նախագծի **1-ին հոդվածի 1-ին մասում** «հարկադրանք» բառը փոխարինել «հարկադրանքի միջոցներ» բառերով**,** 14-րդ հոդվածի վերնագրում, 1-ին մասում, 2-րդ մասում, 3-րդ մասի 2-րդ նախադասությունում, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ մասերում, 25-րդ հոդվածի 3-րդ մասում, 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում և 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 6-րդ կետերում «հարկադրանք» բառից հետո իր համապատասխան հոլովաձևերով լրացնել «միջոցներ» բառը՝ ըստ համապատասխան հոլովաձևերի:		
3.	**ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյան**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Ըստ այդմ, առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «որը կոչված է» բառերը փոխարինել «որի գործունեության նպատակն է» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

4.	**ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյան**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի վերնագիր	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի նպատակը ոստիկանության գվարդիայի լիազորությունների իրականացման սահմանների հստակեցումն է: Մինչդեռ, վերնագրում գործածված «շրջանակը» բառը ավելի վերաբերելի է գվարդիայի լիազորությունների քանակական բնութագրին: Ուստի օրենսդրի նպատակը լիարժեք արտացոլող եզրույթի գործածումը անհրաժեշտ է իրավական որոշակիություն ապահովելու առումով: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդվածի վերնագրում «շրջանակը» բառը փոխարինել «սահմանները» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
5.	**ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյան**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 3-րդ մասում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			«իրականացման» բառը փոխարինել «ենթակա կարեւորագույն նշանակության օբյեկտները պահպանելու, ինչպես նաեւ հատուկ բեռների տեղափոխման անվտանգությունն ապահովելու» բառերով:		
6.	**ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վիլեն Գաբրիելյան**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր, 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ կետեր	ՀՀ Սահմանադրության 155-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է»: Հարկ է նշել, որ «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի համաձայն՝ ոստիկանության գվարդիան չի կազմելու զինված ուժերի բաղկացուցիչ մաս: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «2-րդ եւ 2.1-ին մասերով» բառերը փոխարինել «2-րդ մասով» բառերով, իսկ «եւ առաջադրանքները» բառերը հանել: Միաժամանակ, վերոնշյալով պայմանավորված՝ առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածը լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «5) անհրաժեշտության դեպքում կատարել ռազմական դրություն	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակներում հատուկ առաջադրանքներ:»: Նշված կարգավորումների տրամաբանությամբ առաջարկվում է՝ 1) «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը հանել, 2) «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ» բառով, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետը համապատասխանեցնել օրենսդրական տեխնիկայի կանոններին:		

7.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ գլուխներ	Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի «ԳԼՈՒԽ 1»-ի եւ «ԳԼՈՒԽ 2»-ի համարակալումն առաջարկվում է համապատասխանեցնել նախագծի մյուս գլուխների համարակալման ձեւին՝ գլուխների համարակալումից հետո նշելով միջակետ՝ իրավական ակտի միատեսակ տեսքն ապահովելու նպատակով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
8.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածի վերնագիր, 1-ին, 3-րդ մասեր և 21-րդ հոդվածի 6-րդ մաս	Նախագծի 9-րդ հոդվածի վերնագրից և 1-ին մասից առաջարկում ենք հանել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված» և «պետական մարմինների եւ կազմակերպությունների շենքերն ու շինությունները եւ» բառերը իսկ նույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերից հանել «եւ» շաղկապը: Նույն հոդվածի 3-րդ մասում և 21-րդ հոդվածի 6-րդ մասում գործածվող «կառավարությունը» բառը փոխարինել «Կառավարությունը» բառով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
9.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «եւ» շաղկապը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

10.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մաս, 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 11-րդ հոդվածում առկա է նույն իմաստն արտահայտող «հատուկ պետական պաշտպանության ենթակա անձ» եւ «պետական պաշտպանության ենթակա անձ» հասկացությունների միաժամանակյա կիրառություն: Այս կապակցությամբ հարկ է անդրադառնալ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին, այն է՝ նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքում կիրառվում է «հատուկ պետական պաշտպանության ենթակա անձ» հասկացությունը, ինչպես նաեւ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանված կարգավորումները՝ առաջարկում ենք Նախագծում առկա «պետական պաշտպանության ենթակա անձ» հասկացությունը փոխարինել «հատուկ պետական պաշտպանության ենթակա անձ» հասկացությամբ:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

11.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մաս	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 11-րդ հոդվածի 1-ին մասում «նախաձեռնությամբ» բառից հետո առաջարկում ենք լրացնել «իրականացվող» բառը՝ դրույթը հստակեցնելու նպատակով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
12.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 8-րդ մաս, 16-րդ հոդվածի 6-րդ մաս և 24-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասեր	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 8-րդ մասում, 16-րդ հոդվածի 6-րդ մասում և 24-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերում «վերադաս» բառը, ըստ համապատասխան հոլովաձևերի, առաջարկում ենք փոխարինել «ղեկավար» բառով՝ ըստ համապատասխան հուլովաձևերի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ **«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի** 6-րդ հոդվածում գործածվում է **«ղեկավարում» եզրույթը:**	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

13.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 15-րդ հոդվածի 4-րդ մասում «նախատեսված» բառից հետո լրացնել «շենքերի, շինությունների, տարածքների եւ այլ օբյեկտների» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
14.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մաս, 20-րդ հոդված -ի 1-ին մասի 2-րդ կետ	Առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի լրամշակված նախագծի 16-րդ հոդվածի 5-րդ մասում և 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «հոգեբուժական կազմակերպություն կամ համապատասխան բժշկական հաստատություն» բառերը փոխարինել «համապատասխան բժշկական կազմակերպություն» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
15.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մաս	Դրույթը հստակեցնելու նպատակով առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 19-րդ հոդվածի 3-րդ մասում «գործադրելուց» բառը փոխարինել «գործադրելիս» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

16.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ և 3-րդ մաս, 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում և 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հատուկ բեռների ինչպես նաեւ» բառերը փոխարինել «ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգությունն ապահովելու, այդ թվում՝» բառերով: Բացի այդ, 21-րդ հոդվածի 3-րդ մասում «սահմանված» բառերը փոխարինել «նախատեսված» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
17.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ, 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից և 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			շինությունների եւ» բառերը:		
18.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մաս	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 10-րդ հոդվածը առաջարկվել է լրացնել նոր 5-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «5) անհրաժեշտության դեպքում կատարել ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական գործողությունների շրջանակներում հատուկ առաջադրանքներ:»: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը փոխկապակցված է նշված առաջարկի հետ: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 23-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հակաահաբեկչական գործողությունների իրականացմանը մասնակցելիս կամ ռազմական դրություն հայտարարված տարածքում իրականացվող պատերազմական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			գործողությունների շրջանակներում հատուկ առաջադրանքներ կատարելիս ոստիկանության գվարդիայի ծառայողը սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների պահպանմամբ իրավասու է գործադրել հատուկ տեխնիկա:»:		
19.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 7-րդ, 9-րդ մասեր և 27-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ, «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով շարադրվող 4-րդ գլուխի 34-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ կետեր	«Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի համաձայն՝ բժշկական օգնության և սպասարկման իրականացումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեություն: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի համաձայն՝ նախատեսվում է ոստիկանության գվարդիայի ծառայողների կողմից որոշակի դեպքերում համապատասխան օգնության ցուցաբերում, որը չի կարող լինել վերը նշված լիցենզավորման ենթակա գործունեության շրջանակներում: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 24-րդ հոդվածի 7-րդ, 9-րդ մասերում և 27-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			«բուժօգնություն» բառը փոխարինել «օգնություն» բառով:		
20.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի վերնագիր, 25-րդ հոդվածի 1-ին մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: Բացի այդ, **«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 1-ին մասում** սահմանվում են ոստիկանության գվարդիայի ծառայողի կողմից օգտագործվող անհատական կամ կոլեկտիվ պաշտպանության միջոցների որոշ տեսակներ, որոնք հանդիսանում են հիմնական, բայց ոչ բոլոր միջոցները: Մինչդեռ, առկա ձևակերպմամբ ստացվում է, որ թվարկվածները հանդիսանում են օգտագործվող բոլոր միջոցները: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի վերնագրում «անձնական» բառից հետո լրացնել «կամ ստորաբաժանման» բառերը, իսկ «անվտանգության» բառից հետո լրացնել «ապահովման» բառը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			Միաժամանակ, առաջարկում ենք նույն հոդվածի 1-ին մասում «միջոցներ՝» բառը փոխարինել «միջոցներ, այդ թվում՝» բառերով:		
21.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մաս	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության եւ պարբերական վերապատրաստման նպատակը, մինչդեռ օրենքի նախագծում նշված չէ, թե ինչի հիման վրա պետք է իրականացվի հատուկ պատրաստությունը եւ պարբերական վերապատրաստումը՝ հաշվի առնելով, որ վերջիններս պետք է հասցեագրեն գործնականում առաջացած խնդիրները և վերջնարդյունքում պետք է միտված լինեն Ոստիկանության գվարդիայի գործունեության բարելավմանը: Ըստ այդմ, առաջարկվում է Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 26-րդ հոդվածի 2-րդ մասում «Հատուկ» բառից առաջ լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			պատրաստությունը եւ պարբերական վերապատրաստումն իրականացվում են վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա:»:		
22.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մաս	ՀՀ ներքին գործերի նախարարության ձևավորմամբ պայմանավորված՝ նախատեսվում է նախարարության կրթահամալիրի և Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի միավորման միջոցով մեկ ուսումնական հաստատության ձևավորման համար իրավական հիմքերի ստեղծում՝ հաշվի առնելով նշված բուհերի ենթակայությունը նախարարությանը և վերջինիս կողմից միասնական կրթական քաղաքականությունը մեկ ուսումնական հաստատության միջոցով իրականացնելու անհրաժեշտությունը: Ընդ որում, համապատասխան օրենսդրական փաթեթն արդեն իսկ հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 28-րդ հոդվածի 1-ին մասում «հաստատություններում» բառը փոխարինել «հաստատությունում» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

23.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 29-րդ և 30-րդ հոդվածներ	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից: «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի ընդունման, ինչպես նաև՝ ընդունումից հետո համապատասխան ենթաօրենսդրական բազան ապահովելու, կադրային համալրումներն իրականացնելու համար, հաշվի առնելով նշված աշխատանքների մեծածավալ բնույթը, կպահանջվի որոշակի ժամանակ: Բացի այդ, «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագիծը չի պարունակում ոստիկանության զորքերի զինծառայողների կողմից ոստիկանության գվարդիայի պաշտոններում նշանակվելու համար հատուկ պատրաստություն անցնելու որոշ կազմակերպչական և ժամկետային մանրամասներ, ինչպես նաև՝ չի անդրադառնում	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			ոստիկանության զորքերի՝ հիմնական մասնագիտական գործառույթների իրականացմանը աջակցող զինծառայողների՝ քաղաքացիական պաշտոններում նշանակվելու և այդ դեպքում սոցիալական երաշխիքները պահպանելու հարցերին: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 29-րդ և 30-րդ հոդվածները միավորել և շարադրել նոր խմբագրությամբ՝ «**Հոդված 29. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ** 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 21-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի, 23-րդ հոդվածի 3-րդ մասի, 24-րդ հոդվածի 6-րդ մասի և 28-րդ հոդվածի 4-րդ մասի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի համապատասխան		

			դրույթներն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: 3. Ոստիկանության զորքերի զինծառայողները ոստիկանության գվարդիայի ծառայողի պաշտոնում նշանակվում են սույն օրենքով նախատեսված հատուկ պատրաստություն անցնելուց հետո, իսկ ոստիկանության ծառայողները սույն օրենքով նախատեսված հատուկ պատրաստություն անցնում են ոստիկանության գվարդիայի ծառայողի պաշտոնում նշանակվելուց հետո՝ մինչեւ 2026 թվականի մարտի 1-ը: 4. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված Ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, քաղաքացիական ծառայության այդ պաշտոնները զբաղեցվում են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության		

			պաշտոններում նշանակելու դեպքում թեկնածուի հետ հարցազրույցի անցկացման կարգը սահմանելու մասին» N 288-Ա որոշմամբ սահմանված կարգով: Հարցազրույցին կարող են մասնակցել միայն ոստիկանության զորքերի այն զինծառայողները, ովքեր մինչև սույն օրենքը ուժի մեջ մտնելը ոստիկանության զորքերում իրականացրել են աջակցող մասնագիտական գործառույթներ: 5. Ոստիկանության զորքերի այն զինծառայողը (եթե նրա վրա տարածվում է հավասարեցման պահանջը), որը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով կզբաղեցնի ներքին գործերի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոն, նշանակվելու օրվանից հետո՝ հինգ տարվա ընթացքում, օգտվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից: Այս դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցրած ժամանակահատվածը համարվում է զինվորական ծառայության ստաժ:		

			Պետական կենսաթոշակ ստանալու պահից տվյալ քաղաքացիական ծառայողի աշխատավարձի հաշվարկն իրականացվում է քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի համար օրենքով սահմանված կարգով: Նախկինում հաշվարկվող հավելումները և լրավճարներն այլևս չեն հաշվարկվում: 6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում պահպանվում և հաշվի են առնվում նախկինում կիրառված կարգապահական տույժերը, խրախուսանքի միջոցները, կատարողականի գնահատման արդյունքները, և պահպանվում է ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի իրացման իրավունքը: 7. 2025 թվականի նոյեմբերի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքը:»:		

24.	**ՀՀ կառավարություն**	«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2025 թվականի նոյեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվելու «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքը, իսկ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով առաջարկվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» 1998 թվականի դեկտեմբերի 2-ի ՀՕ-265 օրենքի 17.2-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «, ոստիկանության զորքերի» բառերը: Ըստ այդմ, երկու օրենքների միջև համապատասխանություն ապահովելու համար առաջարկվում է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը փոխարինել «2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

25.	**ՀՀ կառավարություն**	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 19-րդ հոդվածով սահմանվում են ուժային միջոցների գործադրման իրավաչափության **ընդհանուր** պայմանները, իսկ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով հղում է կատարվում «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով սահմանված՝ ուժային միջոցների գործադրման իրավաչափության պայմաններին՝ առանց գործածելու «**ընդհանուր**» բառը: Ըստ այդմ, հղման որոշակիությունն ապահովելու համար առաջարկվում է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «**իրավաչափության**» բառից հետո լրացնել «**ընդհանուր**» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

26.	**ՀՀ կառավարություն**	«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2025 թվականի նոյեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվելու «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքը, իսկ նախագծով առաջարկվում է զինված ուժերի զինծառայողների կողմից ուժային միջոցների գործադրում՝ «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքով սահմանված՝ ուժային միջոցների գործադրման իրավաչափության ընդհանուր պայմաններին համապատասխան: Ըստ այդմ, երկու նախագծերի ուժի մեջ մտնելը միաժամանակ սահմանելու համար առաջարկվում է «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը փոխարինել «2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

27.	**ՀՀ կառավարություն**	«Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդված,	«Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել մի շարք սահմանափակում նախատեսող իրավանորմեր, ինչպիսի օրինակ է «Հավաքների ազատության մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը, ըստ որի՝ ինքնաբուխ եւ շտապ հավաքները չեն կարող տեւել վեց ժամից ավելի: Միեւնույն ժամանակ, «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածով նախատեսվում է. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը:»: Ցանկանում ենք նշել, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է համապատասխան սահմանափակումների համար վարչական պատասխանատվություն	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			նախատեսող նորմերը ուժը կորցրած ճանաչել 2024 թվականի սեպտեմբերի 1-ից: Այսինքն՝ առաջանալու է մի իրավիճակ, երբ «Հավաքների ազատության մասին» օրենքում գործելու են մի շարք արգելող նորմեր, որոնց պահպանման համար առկա չեն լինելու պատասխանատվություն նախատեսող նորմեր: Ըստ այդմ, առաջարկում ենք «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ. «**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:»:		
28.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի վերնագիր, 1-ին, 2-րդ մասեր, 3-րդ մասի երկրորդ	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծում գործածվում են «հարկադրանքի միջոցներ» բառերը: «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի վերնագրով, **1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ մասերով կարգավորվում են համանման հարաբերություններ:** «Նորմատիվ	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		նախադասություն, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ մասեր	իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի վերնագրում, **1-ին և 8-րդ մասերում** «հարկադրանք» բառի համապատասխան հոլովաձևերից հետո լրացնել «միջոցներ» բառը՝ ըստ համապատասխան հոլովաձևերի, 3-րդ մասի երկրորդ նախադասությունում, 6-րդ, 7-րդ և 9-րդ մասերում՝ «հարկադրանքի» բառից հետո լրացնել «միջոցի» բառը, իսկ 2-րդ մասում՝ «հարկադրանքը» բառը փոխարինել «հարկադրանքի միջոց» բառերով:		
29.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»	«Ոստիկանության մասին» օրենքի 9-րդ հոդվածը վերաբերում է ոստիկանության համակարգին և դրա ղեկավարմանը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի 8-րդ մաս, 4-րդ հոդվածով լրացվող 34-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասեր	15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի 8-րդ մասում, 4-րդ հոդվածով լրացվող 34-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերում «վերադաս» բառը, ըստ համապատասխան հոլովաձևերի, փոխարինել «ղեկավար» բառով՝ ըստ համապատասխան հուլովաձևերի:		

30.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 4-րդ գլխի վերնագիր և 34.1-ին հոդվածի վերնագիր	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի համաձայն՝ գվարդիայի ծառայողի պաշտպանության միջոցները կարող են լինել և անհատական, և կոլեկտիվ: Ոստիկանության գվարդիայի ծառայողները հանդիսանալու են ոստիկանության ծառայողներ, և **նշված միջոցների** իմաստով կիրառելու են նույն միջոցները, որոնք	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			պետք է նախատեսված լինեն ոստիկանության ծառայողների համար: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 4-րդ գլխի վերնագրում «ԱՆՀԱՏԱԿԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ԿՈԼԵԿՏԻՎ» բառերը, իսկ նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 34 .1-ին հոդվածի վերնագրում «անհատական» բառից հետո լրացնել «և կոլեկտիվ» բառերը:		
31.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 32-րդ	Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ,	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

		հոդվածի 3-րդ մաս	առաջարկվում է «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 32-րդ հոդվածի 3-րդ մասում «սահմանված» բառերը փոխարինել «նախատեսված» բառերով:		
32.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 32-րդ հոդվածի 6-րդ մաս	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 32-րդ հոդվածի 6-րդ մասում «կառավարություն» բառը փոխարինել «Կառավարություն» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
33.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 1-ին մասի առաջին նախադասության մեջ «պաշտպանության միջոցները»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

		լրացվող 34.1-ին հոդվածի 1-ին մաս	բառերից հետո «՝» կետադրական նշանը առաջարկում ենք փոխարինել «,» կետադրական նշանով և լրացնել «այդ թվում՝» բառերը և կետադրական նշանը:		
34.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 2-րդ մաս	«Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում ոստիկանության գվարդիայի ծառայողն իրավասու է՝ գործել սպառնացող վտանգի բնույթին եւ աստիճանին համաչափ՝ անկախ գործադրվող միջոցից:»: Ըստ այդմ, առաջարկվում է «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 34.1-ին հոդվածի 2-րդ մասը համապատասխանեցնել «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորմանը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
35.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե օրենսդրական ակտով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան	Ընդունվել է:

		կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ գլխի 34.1-ին հոդվածի 3-րդ մաս	(բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրույթներով սահմանվում են նաև՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ գլխի 34.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված ենթաօրենսդրական ակտի ընդունման համար սահմանել 6- ամսյա ժամկետ:	փոփոխությունը:	
36.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված, 6-րդ հոդված	Առաջարկվում է «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			կարեւորագույն նշանակության օբյեկտների ցանկը, ինչպես նաեւ օբյեկտները կարեւորագույն նշանակության օբյեկտների շարքին դասելու չափորոշիչները սահմանում է Կառավարությունը:»: Միաժամանակ, հաշվի առնելով նշված օբյեկտների ցանկը և համապատասխան չափորոշիչները հնարավոր սեղմ ժամկետում սահմանելու անհրաժեշտությունը, առաջարկվում է նշված դրույթի համար ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:		
37.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	«Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2025 թվականի նոյեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվելու «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքը, ինչը նշանակում է, որ մինչև այդ ժամկետը «Ոստիկանության զորքերի մասին» օրենքը շարունակելու է գործել: Այս համատեքստում, «Ոստիկանության մասին» գործող օրենքի և «Ոստիկանության զորքերի մասին» գործող օրենքի համապատասխան դրույթները պետք է գործեն զուգահեռաբար՝ չառաջացնելով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			հակասություններ: Ըստ այդմ, հաշվի առնելով նախագծերի դրույթների փոխկապվածությունը, առաջարկում ենք «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը փոխարինել «2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով:		
38.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, 2-րդ հոդվածի 2-րդ կետ	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «պարբերությունից» բառն առաջարկվում է փոխարինել «մասից» բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է. «Օրենսդրական ակտերում հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների:»: Նույն դիտարկմամբ, առաջարկվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասում «պարբերությամբ» բառը համապատասխանաբար փոխարինել «մասով» բառով:		
39.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում առկա է տեխնիկական վրիպակ: Ինկորպորացիայի խնդիրներից խուսափելու համար առաջարկվում է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածում «զինվորական կոչում կամ» բառերը փոխարինել «կամ զինվորական» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
40.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «14-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել «10-րդ մասի» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

41.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում առաջարկում ենք «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծում կատարվում են լրացումներ:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
42.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, 4-րդ հոդվածի 1-ին կետ	ՀՀ ներքին գործերի նախարարության 4 հենասյունային ուղղություններից մեկը հանդիսանալու է համայնքային ոստիկանությունը: ՀՀ ՆԳՆ ոստիկանության նոր կառուցվածքի և կառավարման մոդելին համապատասխան՝ ոստիկանությունում գործելու են 4 հենասյունային ծառայություններ՝ ոստիկանության գվարդիա, պարեկային ծառայություն, քրեական ոստիկանության և համայնքային ոստիկանության գլխավոր վարչություններ: Նշված ծառայությունների ղեկավարները ի պաշտոնե հանդիսանալու են ոստիկանության պետի տեղակալներ: Նշվածի հաշվառմամբ, հնարավորություն է ստեղծվելու, որպեսզի յուրաքանչյուր հենասյունային ծառայությունում ապահովվի մասնագիտական զարգացում և վերջիններիս	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			գործունեությունը, բացի ոստիկանական ընդհանուր խնդիրների լուծումից, ունենա ոլորտային ուղղվածություն: Այս համատեքստում, հենասյունային 4 ծառայությունների տարածքային ստորաբաժանումները ունենալու են ուղղաձիգ ենթակայություն և միջանկյալ ու ավելորդ կառավարման օղակները վերացվելու են, քանի որ դրանք ընդհանուր կառավարման համակարգում առաջացնում են չհիմնավորված ծանրաբեռնվածություն և հանգեցնում կառավարման արդյունավետության նվազման: Միաժամանակ, պետք է նշել, որ նշված 4 հենասյունային ծառայությունների մի մասն արդեն ձևավորվել է, իսկ մյուս մասի ձևավորման աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ: Բացի այդ, նշված հենասյունային ծառայությունների, այդ թվում՝ համայնքային ոստիկանության ձևավորումը, կապահովի գործունեության համար անհրաժեշտ փոխգործելիություն և արդյունավետություն: Ըստ այդմ, առաջարկում ենք «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և		

			լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի՝ 2-րդ հոդվածում, 1-ին կետից հետո, լրացնել 2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «2) 1-ին մասի 4-րդ կետում՝ «հատկապես կարևոր գործերով ավագ քրեական ոստիկան,» բառերից հետո լրացնել «հատկապես կարևոր գործերով ավագ համայնքային ոստիկան,» բառերը, «,ավագ քրեական ոստիկան,» բառերից հետո լրացնել «ավագ համայնքային ոստիկան,» բառերը, իսկ «,քրեական ոստիկան,» բառերից հետո լրացնել «համայնքային ոստիկան,» բառերը,»:		
43.	**ՀՀ կառավարություն**	Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետ	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համարակալումն առաջարկում ենք համապատասխանաբար փոխել:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
44.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու	Հաշվի առնելով «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

		մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետ	նախատեսված կարգավորումների ուժի մեջ մտնելու տարբեր ժամկետները՝ առաջարկում ենք «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) 3-րդ մասում՝ ա. «և հասարակական անվտանգության ապահովման» բառերը փոխարինել «, համայնքային ոստիկանության» բառերով. բ. «պետերն» բառը փոխարինել «պետերը և ոստիկանության գվարդիայի հրամանատարն» բառերով,»:		
45.	**ՀՀ կառավարություն**	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդված	«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 9-րդ հոդվածը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ հաշվի առնելով «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը. «**Հոդված 9.** Սույն օրենքի 1-ին	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			հոդվածը, 2-րդ հոդվածի 1-ին կետը, 3-րդ հոդվածը, 4-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը և 2-րդ կետը, 5-րդ եւ 8-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից, իսկ սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 4-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 6-րդ և 7-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:		

46.	**ՀՀ կառավարություն**	«Պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը փոխարինել 2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
47.	**ՀՀ կառավարություն**	«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացում կատարելու մասին»	Առաջարկում ենք Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 2-րդ հոդված	փոխարինել «2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը:		
48.	**ՀՀ կառավարություն**	«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետը հանել՝ հաշվի առնելով, որ Սահմանադրության 155-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. **«**Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է**»:** Հարկ է նշել, որ «Ոստիկանության գվարդիայի մասին» օրենքի նախագծի համաձայն՝ ոստիկանության գվարդիան չի կազմելու զինված ուժերի բաղկացուցիչ մաս:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
49.	**ՀՀ կառավարություն**	«Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկում ենք օրենքի նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

50.	**ՀՀ կառավարություն**	«Վարչական իրավախախտումներ ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված,	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածը առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 3.** Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է *պաշտոնական* հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից:»: Փոփոխությունը միտված է ապահովելու «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետների միաժամանակությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
51.	**ՀՀ կառավարություն**	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին»	«Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

		օրենքի նախագծի 2-րդ հոդված	օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը առաջարկում ենք փոխարինել «2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը		

52.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը առաջարկում ենք փոխարինել «2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով՝ հաշվի առնելով «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:
53.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետ, 4-րդ հոդվածի	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետում «հարկադիր կատարման ապահովման» բառերն առաջարկում ենք փոխարինել «հարկադիր կատարումն ապահովող» բառերով, իսկ 4-րդ հոդվածի 2-րդ կետում «դատական ակտերի» բառերը հանել՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:

		2-րդ կետ			
54.	**ՀՀ կառավարություն**	«Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	«Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 2025 թվականի նոյեմբերի 1-ից ուժը կորցրած է ճանաչվելու «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքը, իսկ «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, ոստիկանության զորքերի զինծառայողները» բառերը: Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի մյուս դրույթները կապված չեն 2025 թվականի նոյեմբերի 1-ից «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքը ուժը կորցրած ճանաչելու հետ, և կարող են	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			կիրառվել օրենքն ավելի վաղ ուժի մեջ մտնելու պարագայում: Ըստ այդմ, նշված երկու օրենքների միջև համապատասխանություն ապահովելու համար առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդվածում «Ոստիկանության զորքերի մասին» 1997 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-163 օրենքն ուժը կորցրած ճանաչելու օրը» բառերը փոխարինել «պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից» բառերով:		
55.	**ՀՀ կառավարություն**	«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված, «Հայաստանի Հանրապետության	Հաշվի առնելով նախագծերում առկա համապատասխան դրույթների փոխկապվածությունը, «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 8-րդ հոդվածում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները	Ընդունվել է:

		վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	օրենքի նախագծի 3-րդ հոդվածում (նախագծի 1-ին հոդվածի մասով) և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում սահմանվել են ուժի մեջ մտնելու միևնույն ժամկետները: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի դրույթները ևս փոխկապակցված են նշված նախագծերի դրույթների հետ և պետք է ուժի մեջ մտնեն նույն ժամկետում: Ըստ այդմ, առաջարկվում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «2024 թվականի սեպտեմբերի 1-ից» բառերը փոխարինել «*պաշտոնական* հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով, իսկ «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության		

			օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածում «2024 թվականի սեպտեմբերի 1-ից» բառերը փոխարինել «*պաշտոնական* հրապարակմանը հաջորդող օրվանից» բառերով:		
56.	**ՀՀ կառավարություն**	«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածն առաջարկվում ենք շարադրվել է նոր խմբագրությամբ. «**Հոդված 2**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում *պաշտոնական* հրապարակմանը հաջորդող օրվանից:»: Փոփոխությունը միտված է ապահովելու այս, ինչպես նաև «Հավաքների ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի եւ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետների միաժամանակությունը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

57.	**ՀՀ կառավարություն**	«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ կետեր	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին բառեր, թվեր կամ կետադրական նշաններ այլ բառերով, թվերով կամ կետադրական նշաններով փոխարինելու միջոցով: Ըստ այդմ, առաջարկում ենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետում «բառերով» բառը փոխարինել «բառով» բառով: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի 72-րդ հոդվածում քրեակատարողական ծառայողներին զինծառայողին հավասարեցված	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			անձանց փոխարեն որպես զինծառայող համարելու դրույթը վերանայման կարիք ունի, քանի որ սոցիալական երաշխիքներից որպես զինծառայողին հավասարեցված անձ օգտվելը բովանդակային առումով տարբերվում է նույն սոցիալական երաշխիքները որպես զինծառայողի կարգավիճակ ունեցող անձի համար սահմանված լինելու հանգամանքից: Ուստի, նշված համատեքստում առաջարկվում է զերծ մնալ նույն հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունից:		

58.	**ՀՀ կառավարություն**	«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի 4-րդ հոդված	Օրենքի նախագծի 4-րդ հոդվածն առաջարկում ենք շարադրել նոր խմբագրությամբ՝ հաշվի առնելով «Ոստիկանության գվարդիայի» մասին օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը: «**Հոդված 4.** Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետը եւ 2-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից, իսկ սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը եւ 3-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող	Կատարվել է համապատասխան փոփոխությունը	Ընդունվել է:

			օրվանից։»։		